**Վիճակագրական տեղեկատվություն օգտագործողներին**

Վիճակագրական տեղեկատվության օգտագործողների պահանջարկն ուսումնասիրելու նպատակով, կարծիքի է ներկայացվում **«2021 թվականի վիճակագրական ծրագրի»** նախագիծը՝ խնդրանքով նշված փաստաթղթի վերաբերյալ դիտողությունների և առաջարկությունների պարագայում, դրանք մինչև **2020 թվականի օգոստոսի 3-ը** ներկայացնել ՀՀ վիճակագրական կոմիտեին, հետևյալ հասցեներով՝

***փոստային հասցեն***՝ ք. Երևան, 0010, Հանրապետության պողոտա, Կառավարության 3-րդ շենք

***էլեկտրոնային հասցեն***՝ svod@armstat.am

Համաձայն «Պաշտոնական վիճակագրության մասին» օրենքի 14-րդ հոդվածով սահմանված դրույթի, վիճակագրական ծրագրերը մշակվում են պաշտոնական վիճակագրության օգտագործողների պահանջարկի ուսումնասիրության հիման վրա:

Ըստ վերոնշյալ օրենքի, ՀՀ տարածքում պաշտոնական վիճակագրության իրագործման հիմքը վիճակագրական ծրագրերն են, որոնք ներառում են երկրի տնտեսական, ժողովրդագրական, սոցիալական և բնապահպանական իրավիճակի դիտարկման համար անհրաժեշտ վիճակագրական տեղեկատվությունը՝ հաշվի առնելով առկա ռեսուրսների սահմանափակումները, վիճակագրական տեղեկություններ տրամադրողների վրա դրվող պարտականությունների ծավալը և ծախսերի արդյունավետությունը:

Վիճակագրական ծրագրով նախատեսված գործունեության ուղղություններն ու միջոցառումները հաշվի են առնում երկրի ցուցանիշների համադրելիությունը միջազգային վիճակագրական չափանիշներին, երկարաժամկետ միջակայքում միտումները բացահայտելու նպատակով ապահովում են դրանց հնարավոր կայուն պարբերականությունը և տարեկան կտրվածքով պաշտոնական վիճակագրությանը հատկացվող ռեսուրսների հետ համաչափությունը:

Վիճակագրական ծրագրերը մշակվում են որպես արդյունավետ ռազմավարական և օպերատիվ կառավարման ու համակարգման առանցքային գործիքներ՝ ողջ ազգային վիճակագրական համակարգի համար:

***Շնորհակալություն համագործակցության համար***